

## ՄԵՍՐՈՎԷ 3. ՍԷԹԵԱՆ

ՆՈՐ-ԶՈՒՂԱՅԵՑԻ

Նախորդ սերունդներին պատկանող նշանաւոր գէմքեր կան, որոնք իրենց մատուցած ծառայութեամբ ու մեծարժէք նրախտիքով չը պէտք է մոռացին, այլ յիշատակի մի անկիւն պէտք է ունենան ամեն մի հայի սրտի խորքում:

Այդպիսի գէմքերից էր՝ միշտ իրեն «Նոր Զուգայեցի» յորջորջելու պատիւն համարող Մեսրովք Յ. Սէթեանը, որ կնքեց իր մահկանացուն Կալիաթայում Հոկտ. 31-ին, 68 տարեկան հասակի մէջ:

Հանգուցեալը իր ծննդավայր Նոր-Զուգայի մէջ, դեռ տղայական հասակում, ցոյց է տւել որ իր արտակարգ ընդունակութիւնների շնորհիւ կարող էր զրոյսի մարզի մէջ իր արժանի տեղը գրաւել, ուստի եւ նրա հայրը — Յակովբ Սէթեանը — զտնելով որ Նոր-Զուգան իր 80-ական թւականների ուսումնական մասշտաբով անկարող էր գոհացումն տալ իր ուսումնաձարաւ որդուն, բերում է Կալիաթա եւ մտնում «Հայոց Մարդասիրական Ճեմարան»ը, որի ուսումնական ընթացքը երկու տարւայ ընթացքում աւարտում է ամենամեծ յաջողութեամբ, արժանանալով «ոսկէ մէտալ» մրցանակի:

Բայց հագիւ 20 տարին բոլորած պատանի Մեսրովքի մէջ յառաջդիմութեան ցանկութիւնը անյազ էր եւ ընթերցասիրութեան ու ինքնաշխատութեան կորովը զօրեղ: Նա անբուն գիշերներ է լուսացնում, հետեւելով անգլիական եւ հայ գրականութեան, վերջինի մէջ գրաբարը իր «հանգստական հաւատոյն» դարձնելով: Այդ իսկ պատճառով եւ նա սկզբունք էր դարձրել ո՛չ մի տող աշխարհաբար չը գրել եւ ստացած նամակներին էլ «ոսկեղինիկ գրաբար»ով պատասխանել: Ո՞վ չէ յիշում արտասահմանի հայ մամուլի մէջ նրա գրաբար յօդւածները, միշտ համեմատ՝ իր իտէալը կազմող՝ Մեսրովք Թաղիատեանի խօսքերով:

Կեանքի վրայ հանգուցեալը նայում էր փրկիստփայական աչքերով: Նա ունեցել է լաւ ու վատ օրեր, ինչպէս բոլորն են ունենում, բայց ո՛չ վատ օրերն են յուսահատեցրել նրան եւ ո՛չ էլ լաւ օրերը ոգեւորել: Հանգուցեալն ընտրել էր իր համար ամուրի

կեանքը, զիրքն ու գրիչը յատկացնելով միակ ընկերն ու մխիթարութիւնը:

Անգլիագիտութեան մէջ ձեռք բերած արտասովոր յառաջդիմութեամբ եւ օժտուած գրելու կարողութեամբ, 1895 թւին, 24 տարեկան Մեսրովք հրատարակում է իր առաջին նրախայրերը «Հնդկաստանի հայոց համառօտ պատմութիւն»ը, 2օնւած Անգլիոյ օրւայ նախարարապետ Կլաւտոսին, ի գնահատութիւն հայկական դատի համար նրա տաժած համակրանքին, որպիսի ձօնի համար երիտասարդ հեղինակը ստանում է գոհունակութեան եւ խրախուսանքի ինքնագիր պատասխան:

Դրական-բանասիրական աշխարհին ըստպատրելու տենչով բռնւած, ժրջան մեղւի նման, նրանց հիւթովն ու ննկտարովը սնանկու եւ արբենալու համար որպիսի՝ չարքաշ օրեր է ունեցել հանգուցեալը: Նա 45 երկար տարիներ, տրուպիքական երկրներին յատուկ կլիմայական սոսկալի պայմանների տակ, տընել է Հնդկաստանի չորս ծագերից հաւաքել եւ մոռացութիւնից լոյս աշխարհ բերել նախնի մեծագործ հայերին — Սօջա Իսրայէլ Սարհառին, Սօջա Պետրոս Ոսկանին, Ադա Խաչիկ Առաքելին, Սօջամալին, Գօռգին Սանին եւ — չերկարելու համար շարքը — իրենց հոյակապ գործերով՝ հայ անունը պանծացնող՝ ուրիշ շատ նախնիքների: Հանգուցեալի «Հայերն Հնդկաստանում» անգլերէն մեծահատոր վերջին աշխատութիւնը (տպագրւած 1937 թւին, եւ բաղկացած 629 էջից), հաշւի չառնելով նիւթի հետ կապ չունեցող մի քանի շեղումները, մի գլուխ գործոց է, որի համար աշխարհահռչակ բանաստեղծ՝ Դր. Ռաբինդրանաթ Թագորը իրաւամբ որակել է «հնախուզական տքնաջան աշխատանքի մի յուշարձան»: Եւ նոյնքան իրաւամբ պէտք է յայտնել, որ հանգուցեալի այս աշխատութիւնը միջազգային մեծ փութօր հանեց, ըստ որում Լոնդոնի «Times» օրաթերթից սկսեալ մինչեւ Կալիաթայի «The Statesman» եւ Հնդիկ օրաթերթերը, ինչպէս եւ արտասահմանի համարեայ բոլոր հայ թերթերն ու ամսագրերը գրախօսականներ ու գնահատականներ նւիրեցին:

Հանգուցեալը պատիւն ունեցաւ ըստանալու նաեւ Հնդկաստանի Փոխ-արքայաւորանից, Բէնգալի Նահանգապետարանից եւ Լոնդոնի՝ Հնդկաստանի Գործոց Նախարարութիւնից գոհունակութեան գրութիւններ: Նրա հրատարակած մեծահատոր աշխատութեան արձագանքն այնքան զօրեղ եղաւ որ հեռաւոր Ամերիկայից զանազան ազգային-



ներ, ինչպէս եւ եւրոպայի քաղաքներից, որոնց թուում եւ վատիկանից պատուէրներ ստացւեցին:

Անկախ իր գրական աշխատանքներից, հանգուցեալը անդամ էր նաեւ Բէնզալի Արքայական Ասիական Ընկերութեան, Մեծն-Բրիտանիոյ եւ Իրլանտայի Արքայական Ասիական Ընկերութեան, Կալկաթայի Պատմական Ընկերութեան, Ամերիկայի հին դրամական (numismatic) Միութեան, Բէնզալի գրադարանական միութեան եւ Քննիչ Կալկաթայի Համալսարանի՝ գրաբար եւ աշխարհիկ հայ լեզուների: Աւելացնենք այս բոլորի վրայ եւ այն, որ անցեալ 1938 թին Քէհրանի Դիտութեան Ակադեմիան իր յատուկ պաշտօնագրով տւեց նրան «պրօֆէսոր»ի տիտղոսը:

Իր անդամակցական հանգամանքով, հանգուցեալը օտարազգի ծանօթների ու բարեկամների լայն շրջան ունէր եւ երբեմն Հայ մեծագործութիւններն ու Հայ կուլտուրան դասախօսութիւնների նիւթ էր դարձնում Բէնզալի Արքայական Ասիական Ընկ. տարեկան հաւաքոյթների մէջ:

Հանգուցեալը իւրովսան ծառայութիւնը չէ զլացել նաեւ ազգային-հասարակական ասպարիզում: Վարել է Կալկաթայի Հայոց Եկեղեցական Յանձնախմբի եւ Մարդասիրական ձեմարանի Հոգաբարձութեան անդամակցութեան պաշտօնները: Միջանկեալ աւելացնենք, որ Հնդկաստանի հին հայոց տոհմային մանրամասնութիւնները գիտէր ամենայն ճշտութեամբ, այդ իսկ պատճառով էլ՝ իր սուղ ժամերից բաժին էր հանում իրեն ղեմողների նախնեաց ճիւղագրութիւնները կազմելու եւ նրանց պէտքերին ծառայեցնելու համար:

1928 թին Կալկաթայի հայ հասարակութիւնը մեծ շքով տօնեց հանգուցեալի 40-ամեայ գրական գործունէութեան յորդեանը, որի առթիւ ստացւած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրների ու զրուցութիւնների թուում պէտք է յիշել Գէորգ Ե. երջանկայիշատակ Արքայնագոյն կաթողիկոսի եւ Թեմի օրւայ Առաջնորդ Արքայական Մեսրոպ Մագիստրոս արք-եպիսկոպոսի օրհնութեան կոնդակները:

Անյուսալիօրէն քայքայւած առողջութեամբ, չը նայած իր բազմաշխատ ձեռքն անգոր էր անգամ գրիչ բռնելու, սակայն տեսնելու էր թէ ինչպէս նա կորացած քամակով օրն ի բուն նստած էր գրասեղանի առաջ՝ աշխատելիս: Նա մարմնացումն էր աշխատասիրութեան, տիպարն էր անդու տքնութեան: Սակայն մահւան նախընթաց

երեք ամիսները ընկճեց անողոր հիւանդութեան ծանրութեան տակ, զգալով որ «աւուրք իւր երեկոյացեալ են», ուստի եւ անհունօրէն մտահոգ էր, որ այլեւս զրկւած էր իր կիսաւարտ գործերը վերջացնելու եւ դեռ նորերը ձեռնարկելու անդարձ հնարաւորութիւնից:

Ահա այսպիսի արգասալից, բայց չարքաշ կեանք ապրեց Նոր-Ջուղայեցի Մեսրոպ Ե. Սէթեանը — մէկը հայ ժողովրդի՝ հայ հոգով ու հայ սրտով սնած ու մեծացած զաւակներից — որի յուզարկաւորութիւնը կատարեց ամսոյս 1-ին (Նոյեմբեր) սուար հասարակութեան ներկայութեամբ: Ծաղկեպսակներ էին դրւած հանգուցեալի դագաղի վրայ՝ Կալկաթայի հայոց վիճակաւոր բահանների, Եկեղեցական Վարչութեան, Հայոց Մարդասիրական ձեմարանի Հոգաբարձութեան, Ուսուցչական խմբի, աշակերտութեան եւ յարգողների կողմից: Ի նշան սգի, փակ էին Եկեղեցական Վարչութեան գրասենեակը եւ ձեմարանը. աշակերտութիւնը ուսուցչական կազմի հետ ներկայ էր յուզարկաւորութեանը: Եկեղեցում, դագաղի առաջ, քաղաքիս հայոց վիճակաւոր Տ. Ներսէս քահ. Դաւթեանը մի դամբանականով հանգուցեալի շուրջ վերլիշումներ անելով, դուատեց մատուցած ծառայութիւնները գրական-բանասիրական աշխարհին՝ հին հնդկահայոց մեծագործութիւնները անյայտութիւնից ի յայտ բերելու մէջ եւ եզրակացրեց որ հանգուցեալի մահը մի անսխալարիւնիք բաց է թողնում Հնդկահայ գաղութի մէջ, որպիսի բացը բնականօրէն անդրադառնում էր եւ գրական-բանասիրական անդաստանի վրայ:

Հանգուցեալի մահւան առթիւ Կալկաթայի «The Statesman» օրաթիւթը այսպէս էր արտայայտում. — «Պ. Մեսրոպ Ե. Սէթեանի մահւամբ հայ հասարակութիւնը կորցրել է մէկի, որ երիտասարդ օրերից նիւրեց իրեն հայ պատմութեան եւ կուլտուրային: Իր հետախուզութիւններով, նա ո՛չ միայն լոյս սփռեց հին հայերի՝ Հնդկաստանի մէջ հաստատման ծագումի եւ ընթացքի, այլեւ երկրի պատմութեան վրայ: Լինելով մի տքնաշան ուսումնական, նա այս նահանգի կրթական մարզում ճանաչւած մի հեղինակութիւն էր»:

Յարգա՛նք իր յիշատակին եւ հանգիստ յոգնատանջ աճիւնին:

ԹԱՂԱԿԻՑ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԵՑԻ